Սննդի կազմակերպման կարգ

Սննդի կազմակերպումը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում իրականացվում է առողջապահության սահմանված նորմերի և պահանջների համաձայն: Ճաշացանկը կազմվում է կրթահամալիրի առողջագետների կողմից, հրապարակվում կրթահամալիրի կայքում: Անհրաժեշտ է, որ ճաշացանկը քննարկման համար ուղարկվի առնվազն 10 օր առաջ և հրապարկված լինի առնվազն 5 օր առաջ: Կրթահամալիրում մատուցվող սնունդը պատրաստվում է կրթահամալիրի մասնաճյուղերի դպրոցներում՝ նախապես պատվիրված սննդամթերքներից: Յուրաքանչյուր օր պատրատված ճաշատեսակներից խոհարարն ըստ կարգի փորձանմուշներ է վերցնում և դրանք պահում մինչև հաջորդ օրվա այդ ժամը: Դպրոցի առողջագետը հետևում է ստացվող սննդամթերքներ թարմությանը և որակին, ինչպես նաև մատուցվող սննդի որակին: 2-5 տարեկանների սնունդը կազմակերպվում է իրենց խմբասենյակներում, երկարացված օրվա ճամբարները՝ խոհանոցում: Սնունդը սովորողների համար կազմակերպվում է ինքնասպասարկման սկզբունքով. սովորողներն իրենք են իրականացնում սննդի տեղափոխումը, սպասքադրումը, ուտելուց հետո սեղանի հավաքումը, մաքրումը: Օրվա ընթացքում սննդի մնացորդները տեսակավորվում են, հավաքվում և օրվա ավարտին տեղափոխվում ագարակ: